ՀԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈ

Թեհրանի նորակազմ ժամանակավոր Եկեղեցական Վարչության նախաձեռնությամբ և հրավերով, ամսույս 21-ին Հայ Առաքելական սրահում տեղի ունեցավ հարգանքի և երախտագիտության երեկո, ի պատիվ մայրաքաղաքի Ս. Աստվածածին մայր եկեղեցին կառուցող բարերար պ. Ռոման Եսայանի։

Երեկոյի բացման իր խոսքի մեջ Իրանա-Հնդկաստանի և Թեհրանի թեմական Առաջնորդ՝ Գեր. Վահան եպս. Կոստանյանը ներկայացրեց պ. Ռ. Եսայանին իբրև մարդ, իբրև բարեգործ և իբրև բարերար, որ իր կարողությունից ավելին է արել օգտակար լինելու իր շրջապատին, կարիքավորներին և հանրության։ Հիշեց այն խոշոր նվիրատվությունները, որ պատերազմի ընթացքում արել է Խորհրդային Հայաստանի զավակներին, Կարմիր Բանակին, Ս. Էջմիածնին, ինչպես և տեղական հայ և պարսիկ բազմաթիվ բարեգործական հիմնարկություններին, որոնց գլուխ գործոցն է կազմում մայր եկեղեցու կառուցումը յոթհարյուր հազար թուման ծախքով։

Սրբազան թեմակալը հիշեց նաև այն ջերմ ընդունելության մասին, որին արժանացել է պ. Ռ. Եսայանը Ս. Էջմիածնում, Վեհափառ Կաթողիկոսի և պատգամավորների կողմից կաթողիկոսական ընտրության ժամանակ, որին մասնակցություն ունեցավ բարերարն իբրև Թեհրանի ներկայացուցիչ։

Բարգման հանդիսանալով Թեհրանի հայության երախտագիտական զգացմունքներին, Սրբազանը իր խոսքը վերջացրեց ջերմ արտահայտություններով և ողջադուրեց իր մոտ կանգնած բարերարին։

Բարեբար Ռոման Եսայան

Ապա կարդացվեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գեվորգ Զ-ի կոնդակը և Իրանա-Հնդկաստանի ու Թեհրանի Թեմական Առաջնորդ Գեր. Վահան Եպիսկոպոսի օրհնության գիրը, որոնք ունկնդրվեցին հոտնկայս։

Կարդացվեցին նաև Թեհրանի Եկեղեցական Վարչության ձոնն և Թեհրանի ժամ. Թեմական Խորհրդի շնորհակալական գրությունը։ Բարերար պ. Ռ. Եսայանի հուզումով արտահայտած մի քանի խոսքից հետո, կարդացվեց նրա շնորհակալական գրությունը, որով հայտնում էր, որ ինքը կատարել է իր ազգային պարտականությունը և կոչ էր անում աջակից հանդիսանալ «Անի» մանկատան պահպանման, իբրև երախտագիտություն այն անձնազոհության, որ այդ մանուկների հայրերն ի հայտ են բերել օրհասական պայքարում և խորտակել ֆաշիզմը։

Դրանից հետո, Սրբազան հայրը կրկին շնորհակալություն հայտնելով, բուռն ծա-

վերի տարափի տակ բարերարին հանձնեց Թեհրանի ժամ. Թեմական խորհրդի կողմից պատրաստված հիշատակի արծաթե գեղեցիկ ալբոմը։

Երեկոյին ներկա էին մոտ 300 հոգի՝ հանրային հաստատությունների, միությունների, մամուլի և ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչներ։ Երեկոն վերջացավ վերին աստիճանի ջերմ մթնոլորտում։

ԱՇԽԱՏԱԿԻՑ

(«Ալիք» հունվ. 22 1946 թ.)

Բարերար Ռոման Եսայանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեվորգ Ջ.-ի և Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա.-ի հետ։